

«ԵՐԵՔ ՉԱՓԵՐԻ» ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ  
«ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ» -ՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Գրիգոր Լուսավորչի «Հաճախապատում ճառքը» ծրագրային աշխատություն է, որի մեջ աշխարհում առաջին անգամ գաղափարախոսության մակարդակում և տեսականորեն հիմնավորվում է քրիստոնեական պետական կրոնի, իրավունքի, էսթետիկայի (գեղագիտության), տնտեսության, քաղաքականության և պետության անհրաժեշտությունը: Դրանում արտացոլվել է գրադաշտական և քրիստոնեական քաղաքակրթությունների կապը, դրանց հերթագայումը, ապահովվել դրանց շարունակականությունը, անընդհատականությունը, ժառանգականությունը: Այն, փաստորեն, Աստվածաշնչի և Ավետայի գաղափարների, նորմերի ու ձևերի շտեմարան է, դրանց համատեղման ու հաշտեցման միջոցով քրիստոնեական իրավական, կրոնական, բարոյական, էսթետիկական և այլ գաղափարական-կարգավորիչ նորմատիվ սիստեմների (համակարգերի) ծրագրավորման և ստեղծման մասին փաստաթուղթ, որն էլ այն դարձնում է ինչպես քրիստոնեական, այնպես էլ գրադաշտական իրավունքի, կրոնի, բարոյականության ճանաչման աղբյուր:

Գր. Լուսավորիչը, լինելով քրիստոնեական առաջին պետության և դրա կառուցվածքային մաս հանդիսացող պետական եկեղեցու հիմնադիրներից մեծագույնը, եղել է ոչ միայն աշխարհում առաջին լեզու և լեզվաբանական եկեղեցու ղեկավարն ու հայ ազգի հոգևոր առաջնորդը, այլև պետության բարձրագույն օրենսդիր մարմինը, երկրի գերագույն դատավորը և դատարանների համակարգի ղեկավարը: Այդ ընթացքում էլ, գրելով «Հաճախապատում ճառքը», նա համարձակորեն ռեցեպցիայի է ենթարկել կամ փոխառել է գրադաշտական գաղափարները, նորմերը, դրանց արտահայտման ձևերը, որոնք արդեն փորձարկվել էին պետության կողմից՝ ապահովելով նոր առաջացող քրիստոնեական քաղաքակրթությունների կապը, ինչպես նաև հայ ազգի զարգացման անընդհատականությունն ու ժառանգականությունը: Ընդ որում, նրա կողմից փոխառվել և «Հաճախապատում ճառքում» կիրառվել են ոչ միայն ազգային եկեղեցու և պետության կազմակերպման ու գործունեության արարողակարգային-ծիսական ձևեր, բազմաթիվ նորմադրույթներ, նորմազանգվածներ, այլև դրանց ստեղծման ու գործունեության հնարավորությունն ապահովող սկզբունքներ և մեթոդներ, ինչպիսիք են «Երեք չափերը» կամ «Տրիադները»: Դրանք գործնական բանականության ոլորտում արժեքագնահատականային դատողություններ անելու, ստեղծագործելու, մարդկանց մտքերը, խոսքերը, վարքագիծը կամ արարքները գնահատելու ամենարդյունավետ սկզբունքներ, մեթոդներ են:

Աստվածաշնչյան նորմերը, հատկապես Հին Կտակարանի գաղափարներն ու սկզբունքները, առանձին վերցրած, նման հնարավորություն չէին բնութագրում, իսկ պատմականորեն գրադաշտական գաղափարախոսությունը, նրա գաղափարական-կարգավորիչ նորմատիվ սիստեմները տարածաշրջանում ունեցել են առաջադիմական դեր: Լինելով չափավոր բռնության արդյունք՝ դրանք ապահովել են շարժումը բռնությունից դեպի ազատություն (դեպի քրիստոնեական քաղաքակրթության ձևավորումը), ինչն էլ հանձարեղորեն կոսահել և արձանագրել է Գ. Վ. Ֆ. Հեգելը<sup>1</sup>: Բռնությունից դեպի ազատություն շարժման հանգուցալուծումն էլ իր իրականությունը գտել և տեղի է ունեցել Հայաստանում, որի մասին, ցավոք, Հեգելը տեղյակ չի եղել: Նա չի իմացել նաև, որ այդ «շարժման» հանգուցալուծման ակունքներում կանգնած է եղել և այն ապահովել է Գր. Լուսավորիչը:

«Հաճախապատում ճառքը» գրված է Գր. Լուսավորչի կողմից ավեստական «Երեք չափերի» կամ «Տրիադների» հիման վրա: Դրանց կիրառման, օգտագործման փաստերն այդ ճառերում բազմաթիվ են: Դրանք այնտեղ հանդիպում են գրեթե այնքան, որքան Ավեստայում: «Երեք չափերը» կամ «Տրիադները» ունեն ավեստական ծագում, հանդիպում են դրա բոլոր կառուցվածքային մասերում՝ նասրերում («ասր»), ֆրակարդներում (ֆրագարդ, աֆգարդ, ափկարդ), գաթաներում, հիմներում, յաշտերում: Ավեստայի և այս ճառերի պարունակած «Երեք չափերի» մակերեսային համեմատությունն անգամ ցույց է տալիս դրանց հարազատությունը, նույնությունը և անմիջական կապը: Դա ինքնին ծանրակշիռ ապացույց է այն բանի, որ այդ ճառերի հեղինակը ազգային և նորի՝ քրիստոնեության միջև ժառանգական կապի ու հայկական մշակույթի անընդհատականության ապահովման խնդիր է ունեցել:

«Երեք չափերը» գրադաշտական քաղաքակրթությունում և վաղ քրիստոնեական զարգացման փուլում, շնորհիվ Գրիգոր Լուսավորչի, ունեցել են տեսական և գործնական նշանակություն: Տեսական նշանակությունն այն է, որ դրանք օգտագործվել են որպես արժեքագնահատականային սկզբունքներ և մեթոդներ: Դրանց հիման վրա առաջադրվել ու քննարկվել են նորմեր, գաղափարներ, կառուցվել են իրավական, կրոնական, բարոյական, քաղաքական, տնտեսական և էթետիկական գաղափարական-կարգավորիչ նորմատիվ սիստեմներ, ստեղծվել են գիտության, արվեստի ստեղծագործություններ, օրենսգրքեր: Դրանց միջոցով ապահովվել է դատարանների ու պետական կառավարման մարմինների, քրմական-տաճարական, իսկ քրիստոնեական քաղաքակրթության մեջ՝ եկեղեցու, համայնքային մարմինների կազմակերպումն ու գործունեությունը: Գործնական նշանակությունն էլ այն է, որ պետական և եկեղեցական մարմինների կողմից դրանք օգտագործվել և կիրառվել են որպես կառավարման, դատավարության, կրոնական արարողակարգերի, ծեսերի կազմակերպման ու իրականացման սկզբունքներ և մեթոդներ: Դրանց հիման վրա իրականացվել

<sup>1</sup> Տե՛ս Գ. Վ. Ֆ. Գեգել. Философия религии, т. 2. М., 1977, с. 5–18.

են վերոնշված մարմինների գործառույթները, կարգավորվել է նրանց կողմից նորմերի կիրառման, կատարման, օգտագործման գործընթացը:

«Երեք չափերի» («Բարի միտք, բարի խոսք, բարի գործ», «չար միտք, չար խոսք, չար գործ») գործնական նշանակությունն նաև այն է, որ դրանց միջոցով քննարկվել, գնահատել, արժևորվել և որակավորվել են առանձին մարդկանց նշանակալից, դրական կամ բացասական, չար ու բարի, լավ ու վատ, օգտակար կամ վնասակար բնույթի կոնկրետ «մտքերը» (գաղափար, մտադրություն, դիտավորություն, զգացմունք), «խոսքերը» (գործողություն լավ կամ վատ խոսքի միջոցով՝ դիտավորյալ կամ անզգույշ ասված) և «գործերը» (դիտավորյալ կամ անզգույշ, լավ կամ վատ արարք՝ կատարված մարմնաշարժումների միջոցով կամ ձեռնպահ մնալով դրանցից, ինչպես նաև արարքների շարք կամ գործունեություն): Դրանց միջոցով գնահատվել է մարդկանց կոնկրետ վարքագիծը, այն համեմատվել և համադրվել է իրավունքի, բարոյականության գրավոր աղբյուրներում (Մուրբ Գիրք, օրենքների, կանոնների, պատվիրանների, խրատների, առակների ժողովածուներ և այլն) ամրակալված նորմերի հետ՝ դրանց միջև «նմանություններ» հայտնաբերելու, դատավճիռներ, որոշումներ կայացնելու համար: Եվ եթե անտիկ քաղաքակրթություններում և նոր ժամանակների դատական ու պետական կառավարման պրակտիկայում հիմնականում օգտագործվել և օգտագործվում են արարքների որակման ձևական-տրամաբանական սկզբունքներ, ձևեր ու մեթոդներ<sup>2</sup>, ապա զրադաշտական իրականության մեջ և վաղ քրիստոնեական Հայաստանում գործածության մեջ են եղել հենց սրանք: Դա, իհարկե, չի նշանակում, որ քննության և արարքների որակման տրամաբանական ձևեր Հայաստանում կամ Իրանում չեն օգտագործվել: Դրանք զուգակցվել են, քանզի մտքի տրամաբանական (գիտական) և արժեքականական ձևերը միշտ հանդես են գալիս միասին, համատեղ:

Այս ֆենոմենալ սկզբունքների, հնարքների կամ ձևերի և, միաժամանակ, արժեքագնահատականային նորմատիվ համակարգերի դերն ու նշանակությունն այն է, որ դրանց միջոցով և հիման վրա մարդիկ իրենք իրենց համար առաջադրել են վարքագծի իրավական, բարոյական մաքսիմներ, իմպերատիվներ ու առաջնորդվել դրանցով, ինքնադաստիարակվել, կատարելագործվել: Եվ այդ սկզբունքները հանճարեղաբար առաջադրվել և կիրառվել են է. Կանտից ու նեոկանտականներից բազմաթիվ դարեր առաջ:

Ավեստայի և «Հաճախապատում ճառքի» պարունակած «Երեք չափերը» երկու տեսակ են՝ դրական և բացասական: Դրականը հիմնված է բարու հիմնարար նորմատիվ գաղափարի վրա, իսկ բացասականը՝ չարի: Դրանցից առաջինի դասական օրինակն է «Բարի միտք, բարի խոսք և բարի գործ», իսկ երկրորդինը՝ «չար միտք, չար խոսք և չար գործ» տրիադները<sup>3</sup>: Հ. Թիրաքյանը դրանք կոչել է «ասություն», իսկ չարության «ե-

<sup>2</sup> Տե՛ս В. Н. Ку д р я в ц е в. Общая теория квалификации преступлений. М., 1972, с. 61–69.

<sup>3</sup> Ավեստական տեքստերը և «Երեք չափերը» թարգմանել ու մեջբերում ենք «Авеста в русских переводах (1861–1996). Сост., общая ред., примеч. и справочный раз-

րեք չափը» նա արտահայտել է «Դժխոհություն («դժմտություն»), դժխոսություն և դժգործություն» հետաքրքիր ձևով<sup>4</sup>, որը «Հաճախապատում ճառքում» չի հանդիպում: Բացի այս եռանդամ դասական ձևերից՝ ինչպես Ավեստայում, այնպես էլ Գր. Լուսավորչի «Հաճախապատում ճառքում», առկա են նաև դրանց բազմաթիվ այլ փոխակերպումներ ու մոդիֆիկացիաներ: Երբեմն դրանք «Երեք չափերից» վերածվում են «Չորս չափի», որոնք առկա են միայն Ավեստայում և ավեստական գրականության մեջ, երբեմն էլ՝ «երկու չափի», որպիսիք առկա են միայն «Հաճախապատում ճառքում»: Երբեմն էլ և՛ Ավեստայում, և՛ այս ճառքում դրանց հիման վրա ու նմանությամբ առաջադրվում են գեղարվեստական բնույթ և նշանակություն ունեցող զանազան «Երեք չափեր»:

Ավեստայում սովորական կամ դասական կառուցվածք ունեցող դրական և բացասական բնույթի «Երեք չափերը» առկա են դրա բոլոր կառուցվածքային մասերում, ու դրա հիման վրա ստեղծված ավեստական գրականության մեջ: Դրանք առաջին անգամ հանդիպում են Ավեստայի «Վիդեդատ» նասքի «Հողը» ֆրակարդի 20-րդ տանը, որտեղ ասված է. «... թող գցեն դիակը անգղ թռչուններին՝ ասելով այսպես. «Դրանով նա հրաժարվում է բոլոր չար մտքերից, չար խոսքերից, չար գործերից...»: Նույն ֆրակարդի 42-րդ տանը ասված է. «... Ո՛վ Սպիտամ Զորոաստր, արդարակյաց այրի վրայից մագդայասնիական հավատը քշում-տանում է բոլոր չար մտքերը, չար խոսքերը, չար գործերը, ինչպես կըշեր կտաներ դրանք հզոր հոսանքը արևմտյան քամու»: Նույն ձևի «Երեք չափերն» առկա են նաև «Վիդեդատ» նասքի «Թաղման արարողություն» ֆրակարդի 30-րդ, 100–103-րդ տներում, «Շունը» ֆրակարդի 7-րդ տանը, «Դուալիզմի դոկտրինա» գաթայի 3-րդ, «Ահուրի բարեխոսությունը» գաթայի 1-ին, «Խոմ-յաշտի» 31-րդ տներում և այլ գաթաներում ու յաշտերում:

«Հավատո հանգանակ» յասնայի [որը չափահաս (15 տ.), ինչպես նաև այլադավանից զրադաշտական դարձողի երդումն է] 4-րդ տանն առարկայացած «Երեք չափը» արդեն ինչ-որ չափով տարբերվում է մինչ այդ Ավեստայում հանդիպող դրանց սովորական կամ դասական ձևից: Այնտեղ ասված է. «Հրաժարվում եմ չար, չարագորտյն, չարավատ, կործանիչ դևերի հետ միավորվելուց, որոնք նաև ամենաստախոս, քայքայիչ և չարաբաստիկն են բոլոր էակներից՝ դևերից ու դիվանմաններից, հմայողներից ու դյուրերից: Նրանք բռնանում են կենդանիների վրա մտքերով, խոսքերով, գործերով ու տեսքով»: Ինչպես նկատում ենք, այստեղ «Երեք չափն» ընդունել է «Չորս չափի» ձև: «Տեսքն» այնտեղ դարձել է այս բացասական տրիադի չորրորդ բաղադրիչը: «Դասերը և հավատքով խրատողները (ուսուցանողները)» յասնայի 16-րդ տանը «Երեք չափը» նորից ընդունել է իր սովորական եռաչափ ձևը: Այնտեղ ասված է. «Եվ այդ ճառում Մագդի

дел И. В. Рака (журнал «Нева», СПб., 1998) գրքից: Միաժամանակ, դրանց թարգմանության ժամանակ օգտագործել ենք. “Spiegel Friedrich. Avesta. Die heiligen Schriften der Parsen” (Bd 1-3, Leipzig, 1852-1863) և Wolff Fritz. Avesta - Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae’s Altiranischem Wörterbuch (Strassburg, 1910) աղբյուրները:

<sup>4</sup> Տե՛ս Արտաշիր Պապական. Գարնամակ, պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց դոկտ. Հ. Թիյրաքյան.– «Բանասեր» (Փարիզ), հ. Ե, 1906, էջ 3–137:

կողմից ասվել է երեք չափերի, չորս դասերի և հինգ ռաստունների մասին: Ինչպիսի չափեր (են դրանք). Բարի միտք, բարի խոսք, բարի գործ»<sup>5</sup>:

Այսպիսով, ակնհայտ է, որ «Երեք չափերի» կամ «Տրիադների» «եռամիասնական» կառուցվածքը Ավեստայում մեկընդմիջ տրված և սահմանված չի եղել: Դրանք չեն վերածվել տեսական կամ պրակտիկ ստեղծագործության պրոցեսը և գործունեությունը կաշկանդող ձևերի: Երբեմն «Երեք չափերը» Ավեստայում ձեռք են բերում հատուկ արտահայտչամիջոցներ ու գեղարվեստական երանգավորում կամ էլ ստանում, ինչպես տեսանք, առանձնահատուկ կառուցվածքային ձև՝ վերածվելով «Չորս չափի»: Դրանով իսկ, նպատակահարմարությունից ելնելով, մարդկանց հնարավորություն է տրվում այդ սկզբունքներն ու մեթոդներն օգտագործելիս կամ կիրառելիս դրանց մեջ մտցնել զանազան կարգի կառուցվածքային և պատկերային փոփոխություններ, որից, ինչպես կտեսնենք, հրաշալիորեն օգտվել է Գր. Լուսավորիչը:

Եթե Ավեստայի «Վիդևդատ» նասքի ֆրակարդներում առկա տրիադները հիմնականում ունեն դասական եռամիասնական կառուցվածք, ապա դրա այլ կառուցվածքային մասերում, ինչպես տեսանք, դրանք սկսում են կրել ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային-իմաստային էական փոփոխություններ: Երբեմն անսպասելի փոփոխություններ են կրում նաև իրենց եռամիասնական ձևը պահպանած «Երեք չափերը»: Առանձնակի փոփոխությունների է ենթարկված Ավեստայի «Հավատո հանգանակ» յասնայի 8-րդ տանն արձանագրված «Երեք չափը»: Այնտեղ ասված է. «Այս երդումով և խոստովանությամբ հավաստում եմ ինձ որպես մագդայապաշտ: Երդումով այս պարտավորվում եմ ունենալ միայն բարի միտք, երդումով այս պարտավորվում եմ իրացնել միայն բարի խոսք, երդումով այս պարտավորվում եմ կատարել միայն բարի արարք»: Դասական ձևից շեղումներ կան նաև «Արդվիսուր կամ Աբան-յաշտի» 105-րդ տանը առկա «Երեք չափում»: Այդ տանը Չորոաստրը խնդրում է Անահիտ աստվածուհուն իրեն հաջողություն շնորհել Վշտասպին խրատելու համար, որպեսզի ինքը կարողանա վերջինիս դրդել «մտածել ըստ հավատի, խոսել ըստ հավատի և գործել ըստ դրա»: Այդ «Երեք չափը» նույն ձևերում կրկնվում է Ավեստայի «Չայմադ-յաշտի» 79-րդ տանը: Այնտեղ ասվում է. «Ուժեղ Քեյանիդական խվարնը... Այն կպավ Սպիտամ-Չորոաստրին, որպեսզի նա մտածի ըստ հավատի, որ նա խոսի ըստ հավատի, և գործի ըստ նրա»: Այդ նույն «Երեք չափը» Քեյանիդ Վշտասպի վերաբերյալ կրկնվում է նույն յաշտի 84-րդ տանը: Նախորդներից լրիվ տարբերվող, յուրահատուկ «Երեք չափ» է պարունակում նաև «Միհր-յաշտի» 106-րդ տունը: Այնտեղ յաշտասացի կողմից ասվում է. «Բայց մտածում եմ ես իմ մտքում. «Եվ չկա աշխարհում այնպիսի վատ միտք ունեցող մահկանացու, որի միտքն ավելի ուժեղ (ազդու) լինի, քան բարերար միտքը Միհրի: Եվ չկա մահկանացու աշխարհում, որը վատ խոսքն ավելի ուժեղ (ազդու) ասի, քան Միհրը՝ բարերար խոսքը: Եվ չկա մահկանացու աշխարհում, որը

<sup>5</sup> *Stá u* Авеста в русских переводах (1861–1996), с. 89, 91, 103, 111–112, 114–115, 131, 141, 150, 156–159.

վատ գործն ավելի ուժեղ (ազդու) անի, քան բարեբեր գործը՝ Միհրը»<sup>6</sup>: Երեք դեպքերում էլ թեև առկա են դրական բնույթի և բարու նորմատիվ գաղափարի վրա հիմնված «Երեք չափեր», բայց միաժամանակ դրանք էականորեն միմյանցից տարբերվում են:

Յուրօրինակ են նաև Ավեստայի «Յաշտերի» գրքի «Նախաբան ֆորմուլայի» պարունակած դրական բնույթի մի քանի «Երեք չափերը»: Դրանք դասվում են յուրովի ձևակերպված «Երեք չափերի» շարքին, որոնցից վերջինը վերաճում է «Չորս չափի»: Դրանք ունեն հետևյալ տեսքը և ձևը. «Փառաբանում եմ բարեմտությամբ, բարեխոսությամբ և բարեգործությամբ բարեմտությունը, բարեխոսությունը և բարեգործությունը: Տրվում եմ ամբողջապես բարեմտությանը, բարեխոսությանը և բարեգործությանը ու ամբողջովին հրաժարվում չարամտությունից, չարախոսությունից և չարագործությունից: Բերում եմ ձեզ, անմահ հ սրբեր, աղոթք և գովասանք մտքով ու խոսքով, գործով և ուժով»: Ինչպես տեսնում ենք, այս վերջին, արդեն «չորսանդամ» դարձած չափում, առկա է նաև սովորական «Երեք չափերին» ոչ բնորոշ տերմին՝ «ուժը»: Այդպես «տեսքն» էր դարձել «Հավատո հանգանակ» յասնայի 4-րդ տանը տեղ գտած «Չորս չափի» բաղադրիչներից մեկը՝ վերջինը:

Առանձնահատկորեն ձևակերպված «Չորս չափի» հաջորդ օրինակն առկա է Ավեստայի «Տիշտր-յաշտի» 61-րդ տանը: Այնտեղ յաշտասացն աղոթում է առ Տիշտր (Տիր) աստղը «... հմուտ ճառերով, մտքով ու գործերով և շիտակ, ճիշտ ասված խոսքերով»<sup>7</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս առկա է գեղարվեստականացված մի նոր «Չորս չափ»: Դրա հետ միասին այնտեղ նորովի կատարված է դրա բաղկացուցիչ մասերի տեղափոխություն: «Խոսք» բաղադրիչը գնացել է տրիադի վերջ, «միտք» և «գործ» բաղադրիչները մղվել են երկրորդ տեղ, իսկ առաջին բաղադրիչ է դարձել «հմուտ ճառեր» բառակապակցությունը:

Ավեստայի «Արդվիսուր կամ Աբան-յաշտի» 17-րդ, 104-րդ, 132-րդ տներում առկա են նույն կառուցվածքն ունեցող ևս մի քանի «Չորս չափեր»: Այդ յաշտի 17-րդ տանը Աստվածահայր Ահուր-Մազդը (Արամազդը), իսկ նույն յաշտի 104-րդ, 132-րդ տներում՝ Չորոսաստրը, Դաթիա (Դաիթիա, Դաթայ, Արաքս) գետի ափին աղոթելով Անահիտ դիցուհուն՝ փառաբանում են նրան «հմտորեն ասված ճառերով, և մտքով, և գործերով, և շիտակորեն ասված ճշմարտացի խոսքերով»: «Միհր-յաշտի» 6-րդ տանը առկա է դրական բնույթի մոտավորապես նման «Չորս չափի» մեկ այլ փոխակերպում ևս: Միհրին պաշտամունք մատուցելիս հավատացյալից պահանջվում է աղոթել և գովաբանել Միհրին «...և լեզվով ճարտար, և սրբազան ասույթով, խոսքերով ու գործերով կատարելով օծումներ, և շիտակորեն ասված ճիշտ բառերով»: Սրան ինչ-որ ձևով նման չափեր կան «Վարախրան-յաշտի» 5-րդ տանը, «Արդ-յաշտի» 61-րդ տանը, «Տիշտր-յաշտի» 3-րդ տանը: Բայց ահա նույնպիսի կառուցվածք ունեցող, բայց ձևով ու իմաստով այլ և յուրահատուկ «Չորս չափ» է առկա «Խուրշեդ-յաշտի» 6-րդ

<sup>6</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 160–161, 194, 299:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 266–267:

տանը: Այնտեղ ասված է. «...և ճառով ճարտար, և մտքով ու գործով, և ճշմարտալից խոսքով ես արևն եմ պաշտում»<sup>8</sup>:

Ավեստայի «Զայնադ-յաշտում» էլ ասկա է մեկ սովորական «Երեք», ինչպես նաև ձևով յուրահատուկ, հազվագյուտ կառուցվածքի ու իմաստի տիրապետող մեկ այլ «Չորս չափ»՝ հատուկ հարմարեցված այս յաշտի բանաստեղծական մտահղացման պահանջներին ու անհրաժեշտությանը: «Չորս չափն» ունի հետևյալ տեսքը. «Յոթ միահամուռներ, յոթ միաձայներ և յոթ համախիշխանականներ՝ ունենալով նույն միտքը, և խոսքը, և գործը, նույն ծնողն ու նույն տիրակալն ունեն, որն է Ահուր-Մազդն արարիչ: Իրար հոգի տեսնող են նրանք, մտածմունքներում՝ մտքի մասին բարի, մտածմունքներում՝ խոսքի մասին բարի, մտածմունքներում՝ գործի մասին բարի, մտածմունքներում՝ գովեստի տան մասին... »<sup>9</sup>: Ինչպես տեսնում ենք, այս դեպքում «Չորս չափի» վերջին բաղադրիչ է դարձել զրադաշտական երկնային թագավորության մասին մտածմունքները, որը դիտվել է ամեն մեկի և յուրաքանչյուրի մտքի, խոսքի ու գործի գերագույն նպատակ: Բացի այդ՝ յոթ աստվածությունները կամ համշասպանդաններն այստեղ նույնպես հիշատակվում են երեք անգամ, բնութագրվում երեք տարբեր մակդիրներով՝ կազմելով ուրույն «Երեք չափ»: Դա վկայում է նաև այն մասին, որ «երեք» թիվը զրադաշտության մեջ իսկապես եղել է սրբազան:

Առանձնահատուկ դրական ու բացասական բնույթի և նույնքան կատարյալ «Չորս չափեր» են պարունակում «Հոգու բախտը մահվանից հետո» յաշտի 8–18-րդ և 27–36-րդ տները: Առաջինում նկարագրված է, թե ինչպես Ահուր-Մազդի ղեկավարած աստվածային դատարանի կողմից դատվելուց և երկնային թագավորության որևէ օթևանում բնակվելու իրավունք ստանալուց հետո մահացած արդարակյացի հոգին դեպի այնտեղ է սլանում ճոխ բուսականության վրայով՝ ուղեկցվելով հարավի քամու բերած բուրումնավետ հոտերով: Երկնային թագավորության շեմին նրան դիմավորում է իր հավատը՝ երիտասարդ, գեղեցիկ աղջկա տեսքով և ուղեկցում նրան դեպի իր բնակարանը: Աղջկա գեղեցկությամբ հիացած հոգին նրան հարցնում է, թե ով է նա: Աղջիկը պատասխանում է. «Ես, ով պատանի բարեմիտ, բարեխոս, բարեգործ, բարեհավատ, քո սեփական հավատն եմ ...: Դու ինձ սիրում էիր, ով պատանի բարեմիտ, բարեխոս, բարեգործ, բարեհավատ ...: Դու քո բարի մտքերով, այդ բարի խոսքերով այդ բարի գործերով ինձ էլ ավելի բարձր դիրքի հասցրեցիր»: Դրանից հետո արդարակյաց հոգին, առաջին քայլն անելով, ընկնում է երկնային թագավորության առաջին օթևանը կամ կայանը՝ «Հումաթ» (բարի միտք): Երկրորդ քայլն անելով՝ արդարակյաց հոգին կանգնում է «Հուխտի» (բարի խոսքի) վրա: Երրորդ քայլը նրան կանգնեցնում է «Հվարեշտի» (բարի գործերի) վրա, իսկ չորրորդ քայլը նրան հասցնում է հավերժ լուսատուներին կամ «Գովեստի տուն» (Գարություն, այն է՝ երկնային թագավորություն):

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 157–158, 160, 177, 195, 248, 272, 251, 299, 333–335, 342, 357, 375, 381, 391–394, 399:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 381, 391–394, 399:

Նույն յաջտի 27–36-րդ տներում էլ առկա են նույն քանակի ու ձևի բացասական «Չորս չափեր»: Այնտեղ նկարագրված է, թե ինչպես գարշահոտությունների միջով դեպի դժոխք սլացող չար մարդու մահացած հոգուն դժոխքի շեմին դիմավորում է ջադու աղջիկը, որպեսզի ուղեկցի նրան հատկացված դժոխքի համապատասխան օթևան: Երբ նրա տեսքից սարսափահար դժոխք ուղևորվող չար ոգին նրանից հարցնում է, թե ով է նա, ապա ջադուն պատասխանում է. «... ես քո չար գործերն եմ, ով չարամիտ, չարախոս, չարագործ և չարահավատ մեղսավոր...»: Այնուհետև նկարագրվում է, թե ինչպես մեղավորի «ճոճվող» հոգին, առաջին քայլն անելով դեպի դժոխքի կողմ, կանգնում է նախ Դուժմաթին («դժ-մտքին»): Այնուհետև երկրորդ քայլն անելով՝ նա կանգնում է Դուժուխտին («դժ-խոսությանը, դժ-խոսքին»): Երրորդ քայլով նա հայտնվում է Դուժվարեշտի («դժ-գործության») վրա, իսկ չորրորդ քայլից հետո գահավիժում «անսահման խավարի» աշխարհը, որն ամենախոր և վերջին դժոխային օթևանն է՝ Ահրիմանի թագավորությունը<sup>10</sup>:

«Հոգու բախտը մահվանից հետո» յաջտի 8–18-րդ տներում բարու, իսկ 27–36-րդ տներում՝ չարության սուբստանցի վրա հիմնված այս երկու տեսակի բացառիկ «Չորս չափերը», դրանց վրա հիմնված դժոխքի և դրախտի չորս հարկերի կամ օթևանների մասին կառուցվածքային պատկերացումներն ու գաղափարները, դրանց շեմին հոգիներին համապատասխան չար կամ բարի սուբստանցների կողմից դիմավորելու պատկերները նույն ձևով Գր. Լուսավորչի կողմից փոխառվել, տրանզիտացվել, ներմուծվել են քրիստոնեական հավատի ու գաղափարախոսության մեջ և արտացոլվել «Հաճախապատում ճառքում»<sup>11</sup>:

Երբեմն էլ «Երեք չափերի» ավանդական ձևաչափերն ու կառուցվածքը Ավեստայում օգտագործվում են այլ բովանդակություն, նշանակություն և իմաստ ունեցող, գեղարվեստական բնույթի «Երեք չափեր» ստեղծելու համար: Այդպիսիք են «Ֆրավարդին-յաջտի» 27, 30–33, 35, 37, 49, 53, 55, 57, 59, 61 տներում տեղ գտած «Երեք չափերը», որոնցում ֆրավաշիները՝ աստվածային գորքը կազմող մարտական հրեշտակները, կոչվում են «բարի, ուժեղ, սուրբ»<sup>12</sup>:

Բազմաթիվ անգամներ ավեստական այս «Երեք չափերը» նույն նպատակով, կարգով և ձևով կրկնվում են «Հաճախապատում ճառքում»՝ միշտ դրսևորվելով առանձնահատուկ կերպով: Ավելին. այդ ճառերը գրված են դրանց հիման վրա: Դրա հետ միասին, ինչպես դա պարզ է ճառերի բովանդակությունից, այդ սկզբունքների հիման վրա ռեցեպցիայի են ենթարկվել, ընդօրինակվել և քրիստոնեական իրավական ու այլ սիստեմների մեջ են ներդրվել գրադաշտական բազմաթիվ գաղափարներ, նորմեր, հավատալիքներ կամ էլ դրանք մերժվել և օտարվել են:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 411: Տե՛ս նաև՝ Արտա Վիրապ Նամակ, պահլավերենից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, 1958, գլ. 17, էջ 64–66:

<sup>11</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք.– Մատենագիրք հայոց, հ. Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 10, 24, 83, 105, 112, 125, 133 և այլն:

<sup>12</sup> Տե՛ս Աвестա в русских переводах (1861–1996), с. 321–339.

«Երեք չափերի», ինչպես նաև բազմաթիվ զրադաշտական նորմերի, հավատալիքների առկայությունն այս ճառերում նույնպես ծանրակշիռ ապացույց է այն բանի, որ այդ աշխատության հեղինակը հին հայկական և նոր՝ քրիստոնեական քաղաքակրթությունների միջև, ժառանգական կապի անընդհատականությունն ապահովելու խնդիր է ունեցել:

Գր. Լուսավորիչը եղել է նորարար ամեն ինչում, այդ թվում՝ «Երեք չափերի» հարցում: Դրանց հիման վրա նա ստեղծել է նաև «Երկու չափ», որն Ավեստայում չի հանդիպում: Դրանք բազմաթիվ են «Հաճախապատում ճառքում», ուստի նախ դրա մասին: Բ ճառի 29-րդ տանն ասված է. «Զի նորա կենարար սիրովն վայելեցեն ի բարութիւնսն որ ի վեր է քան զամենայն միտս և զխորհուրդս եւ քան զգաւրաց երկնավորաց, զի հանգուցանէ յանմահ կարգս»: Դ ճառի 72-րդ տանը ասված է. «... քահանայութեան շնորհի հաւանական կամաւք արժանի լինել, եւ լուսաւորել զամենայն խորհուրդս մտաց լուսով զիտութեամբ եւ իմաստութեամբ. արժանաւոր երախտաւոր վարուք հասանել ի նաւահանգիստն կենաց»: Բնչպես ակնհայտ է դառնում այս «երկու չափերից», դրանցից առաջինում տարբերակվում են «միտքը» և «խորհուրդը», ընդ որում «խորհուրդը» օգտագործվում է «Երեք չափերի» բաղկացուցիչ հանդիսացող «խոսքի» փոխարեն: Երկրորդ «Երկու չափում» «խորհուրդն» արդեն դառնում է «մտքի» բովանդակություն, իմաստ, նույնանում «հավանական կամքի» հետ: Այնտեղ առաջարկվում է Աստծու կամքին ներդաշնակ ու ազատորեն դրա հետ մտքում «հավանական կամք» ձևավորելու և ցուցաբերելու միջոցով սեփական մտքերը լուսավորել աստվածային լույսով ու արժանի դառնալով այդ շնորհին՝ համապատասխան երախտագետ վարք դրսևորել: Այստեղ «վարքը» բարի գործերի շարք կատարելու կամ գործունեություն ծավալելու իմաստ ունի, առանց որոնց «կենաց նավահանգիստ» հասնել անհնար է:

Գ ճառի 24-րդ տանը առկա է մեկ ուրիշ «Երկու չափ»՝ նույնպես կազմված «մտքից» ու «խորհրդից»: Այնտեղ ասված է. «... որ անհաս է քան զմիտս ու զխորհուրդս»: Ե ճառի 37-րդ տանը առկա է սրանց նման մեկ ուրիշ հետաքրքիր «Երկու չափ»: Այնտեղ ասված է. «Բմացա ը ըստ իւրաքանչիւրոց խորհրդոց եւ գործոց զհատուցումն արդար Աստուծոյ կշռաւքն»: ԺԳ ճառի 80-րդ տանը առկա մեկ ուրիշ «Երկու չափում» էլ ասված է. «Զի ամենայն խորհուրդք եւ գործք մտերմութեան երկնաւորաց, երկրաւորաց եւ սանդարամետականաց առաջի Աստուծոյ ամենակալ տէրութեանն հանապազար վերանայ ի կշիռս»<sup>13</sup>: Այս բոլոր դեպքերում «խորհուրդ» բառը և հասկացությունը Գր. Լուսավորչի կողմից օգտագործվում է որպես խիստ բազմանշանակ տերմին: Այն նշանակում է ինչպես միտք, այնպես էլ մտքի բովանդակություն և միաժամանակ միտքը հղացած սուբյեկտի կողմից ասված խոսք: Այն հանդես է գալիս նաև որպես ուրիշին տրված խորհրդատվություն, ինչպես նաև խոսք ու միտք միաժամանակ: Այն ունի ինչպես «մտքի» կամ, այսպես ասած, «ներքին» խոսքի, այնպես էլ «արտաքին» խոսքի նշանակություն, կատարում է ինչ-

<sup>13</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 10, 26, 27:

պես մտքերի, այնպես էլ զգացմունքների արտահայտման գործառույթ, որի դեպքում, փաստորեն, հանդես է գալիս որպես գործողություն խոսքով:

Մյուս առանձնահատուկ «Երկու չափն» առկա է Ե ճառի 20-րդ տանը: Այն բազմանշանակ, հնարամտորեն և խորիմաստաբար կառուցված «Երկու չափի» տեսակ է, որը կարելի է դիտել նաև «Երեք չափ»: Այնտեղ ասված է. «Զի յանուանցն ուսուցանեն մեզ երկնավորէք եւ երկրաւորք կալ ի մտերմութեան եւ ի բարիխորհրդութեան ի բարի գործս»: Այստեղ սովորական «Երեք չափի» բաղկացուցիչ տարր հանդիսացող «մտքի» փոխարեն օգտագործված է «մտերմություն» բառը, որը սովյալ դեպքում հանդես է գալիս որպես մտքի բովանդակությունն արտահայտող բառ: Այն արտահայտում է ազատ, «մտերիմ կամքը», որը ցանկանում են մարդկանց մտքերում ներդնել երկնայինները և նրանց հետևողք երկրայինները: Այնտեղ, փաստորեն, ասվում է, որ իրերն իրենց անուններով կոչելու միջոցով երկնայինները և երկրայինները ուսուցանում, տարածում են մտերմություն պարունակող միտքը բարեխորհրդության, այն է՝ բարի խոսքով արտահայտելու միջոցով: Մարդկանց խորհուրդ է տրվում մտերմորեն հետևել Աստծո բարի խոսքերին ու բարի գործերին:

Դրանից ոչինչ չի փոխվում, երբ երբեմն այն կոչվում է նաև «մտերիմ կամք» ինչպես որ է Գ ճառի 23-րդ, ԺԱ ճառի 76-րդ տներում: Երբեմն էլ այն կոչվում է «հավանական կամք», ինչպես որ է Բ ճառի 72-րդ տանը, կամ Զ ճառի 32-րդ տանը, որտեղ այն կոչվում է «Քրիստոսի քաղցր եւ աննախանձ կամք»: Զ ճառի 41-րդ տանը այն «մարդասեր և շնորհալի կամք» է, Է ճառի 2-րդ տանը՝ «հաճոյական կամք», ԺԳ ճառի 15 տանը՝ «սուրբ հաճոյակատար կամք»: ԺԱ ճառի 33-րդ տանն էլ Նրա կամքը կոչվում է «կենդանի կամք», իսկ Երկնային Թագավորությունը՝ «բնակարան կենդանի կամաց նորա»: ԻԳ ճառի 118-րդ տանն այն արդեն կոչվում է «կամս միամիտս» և այլն:

Ե ճառի 26-րդ տանն էլ է բերվում «Երկու չափի» մի նոր ձև: Այն ունի հետևյալ տեսքը. «... զհիվանդացեալսն անհաւատութեամբ եւ երկմտութեամբ՝ բժշկէ ուղղափառ հաւատով եւ բարի գործութեամբ»<sup>14</sup>: Տվյալ դեպքում էլ «մտքի» ամբողջ բովանդակությունը հանգեցվում է «ուղղափառ հավատին», և այն դիտվում է որպես բարու ու չարի միջև կողմնորոշվելու, ընտրություն կատարելու, մարդու կամքն ուղղորդելու միակ հիմք և պատճառ: Այս առումով ուղղակի կապ կա սրա և արդեն նշված «Արդվիսուր կամ Աբան-յաշտի» 105-րդ տանն առկա «Երեք չափի» հետ:

Ինչ վերաբերում է «Հաճախապատում ճառքում» առարկայացած «Երեք չափերին», ապա դրանք բազմաթիվ են՝ գրեթե այնքան, որքան Ավեստայում: Հիմնականում ունենալով իրավական, բարոյական, քաղաքական, կրոնական բնույթ ու նշանակություն և հանդես գալով իբրև դրանց արժեքն ու անարժեքությունը որոշելու միջոց՝ դրանք միաժամանակ ունեն գեղագիտական նշանակություն, աչքի են ընկնում գեղարվեստական կատարելությամբ, պատկերավորությամբ և շքեղությամբ: Դրանք բարձրաց-

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 27:

ված են կատարելության մի նոր աստիճանի, որոնց մեջ առկա են նաև Ավեստայում բացակայող անսպասելի ու իմաստուն լուծումներ:

Առաջին «Երեք չափը» ներկայացված է Ե ճառի 8-րդ տանը: Այնտեղ ասված է. «Բարի կամաւք եւ բարի խորհրդով եւ բարի գործովք ցուցեալ զգործ պիտանութեան»: Ինչպես տեսնում ենք, այս «Երեք չափում» «միտք» չափի կամ բաղադրիչի փոխարեն սրամտորեն օգտագործված է «կամք» չափը: Այստեղ բարի կամքը և Ե ճառի 20-րդ տանն առկա «Երկու չափում» օգտագործած «մտերմությունը», որը նշանակում է «մտերիմ կամք», նույնություններ են: Է. Կանտի ուսմունքի դիրքերից ելնելով՝ կարելի է ասել, որ ժամանակին Գր. Լուսավորիչն արդեն միևնույնից տարբերել է կամքը, բանականությունը և զգացմունքները: Նրա մոտ կամքը՝ բարի կամ չար (որն էլ պրակտիկ բանականությունն է), գիտության, իմաստության (որն էլ մաքուր կամ զուտ բանականությունն է), զգացմունքների հետ միասին դիտվում է որպես «մտքի» ամբողջ բովանդակությունը: Ինչպես այստեղ կամքը, այլ առիթներով էլ նա մտքի հետ նույնացնում է գիտությունը, իմաստությունը կամ հանճարը (Բ:1, Բ:31, Բ: 52, Բ:64, 113–114, 146, Գ:1, Դ:14, 33, Դ:72 և այլն): Մարդու և այլ բանական արարածների կողմից զանազան իրադրության մեջ առաջին պլան կարող է մղվել և գործադրվել «մտքի» այդ կարողություններից որևէ մեկը: Այսպիսով, նա կամքի ոլորտը՝ որպես պրակտիկ բանականության ոլորտ, տարբերում է «գիտության», իմաստության, հանճարի կամ զուտ բանականության ոլորտից, զգացմունքների աշխարհը՝ սրանցից՝ դրանք համարելով մարդու մտքի տարբեր կարողություններ: Եվ դա ասված է Է. Կանտից շատ դարեր առաջ:

Զ ճառի 69–71-րդ տներում ձևակերպված է մեկ այլ՝ ձևով և բովանդակությամբ նույնպես հազվագյուտ «Երեք չափ», որում նորից «մտքի» փոխարեն օգտագործված է «կամք» բաղադրիչը: Այն ունի հետևյալ տեսքը. «... Եւ զեկամուտ քաղն չար կամացն եւ չար խորհրդոցն եւ չար գործոյն խլել խոստովանութեամբ: Եւ զխոսանացեալ միտսն ի ծուլութիւն եւ յարհամարհանս ուղղել եւ ի գործ ածել բարոյ ել զգուշանալ եւ զգաստանալ»: Սրանք բոլորն էլ, ըստ էության, «Երեք չափի» նոր տարատեսակներ են, որոնց մեջ «կամքը» առաջին անգամ օգտագործված է որպես ամբողջ «միտքը» արտահայտող ֆենոմեն: Այդպիսի «Երեք չափեր» Ավեստայում բացակայում են:

«Խորհուրդ» հասկացությունը, ինչպես արդեն ասվել է, խիստ ընդգրկուն հասկացություն է, և, ի տարբերություն, օրինակ՝ Դ ճառի 72 տանն առկա «Երկու չափի» կամ Ը ճառի 81-րդ տան «Երեք չափի», որոնցում այն «մտքի» արտահայտիչ է, այստեղ արդեն կատարում է «արտաքին» խոսքի արտահայտման գործառույթ: Խոսքերը նախ ձևավորվում, «խորհվում» և ասվում են մտքի մեջ, հետո նոր միայն նյութականանում են, վերածվում գործողության՝ խոսքով և գործով: Այստեղ այն հանդես է գալիս որպես գործողություն խոսքով, և դրա միջոցով առավել չափով արտահայտված է նրա կապող դերը «մտքի» և «գործի» միջև:

Ե ճառի 21 տանն էլ առկա է մեկ այլ՝ ձևով առանձնահատուկ և գեղարվեստորեն պատկերավոր ու բովանդակալից «Երեք չափ»: Դրանում էլ

«խոսք» բաղադրիչի փոխարեն օգտագործվել է «սփռել» (խոսելով) բառը: Այնտեղ ասված է. «Ձի յանուանցն ուսուցանեն մեզ երկնաւորք եւ երկրաւորք կալ ի մտերմութեան եւ ի բարեխորհրդութեան ի բարի գործս. յորդորել եւ զայլս ի բարին եւ ի հաճոյսն ամենազար տերութեանն, եւ ի խափանումն անել աղտեղի բարուց շարժմանց: ... զանմոլար գիտութիւն սփռել (խոսելով, խոսքերով, բառերով – Ս. Խ.) ի լսելիս մարդկան, զարթուցանել ի գործ բարեաց, եւ ունել զերասանակս անձնիշխան կամաց ի պահպանութիւն պատուիրանին եւ յիրաւունս Տեառն»<sup>15</sup>: Այստեղ, ինչպէս տեսնում ենք, բանը ոչ թէ խոսելու, առանձին խոսք ասելու, այլ նաև դրանք սփռելու («գիտություն»), քարոզելու, անձնիշխան կամքի երասանակը ձգելու, սահմանափակելու, այն Աստծու օրենքների սահմանների մեջ դնելու և դրանց հիման վրա մարդուն դեպի բարին նպատակաուղղելու մեջ է: Եվ այստեղ ազատ կամքը և «անմոլար գիտությունը», դրա արդյունքները՝ գիտելիքները, միմյանցից որոշակիորեն տարբերակված են:

Ավելորդ չի լինի նշել նաև, որ այս տների ու Ավեստայի «Աքաղաղը» ֆրակարդի միջև առկա է անմիջական կապ: Ինչպէս այստեղ է (և «Հաճախապատում ճառքի» այլ շատ հատվածներում) բազմիցս արժևորվում հարթմնիությունը՝ պահանջելով մարդկանց «զարթուցանել ի գործ բարեաց», այնպէս էլ Ավեստայի նշված ֆրակարդում աքաղաղը վաղ առավոտյան կանչում և մարդկանց արթնացնում է բարի գործեր կատարելու՝ դրանով իսկ նրանց փրկելով անգործության և ծուլության դև Բուշաստի ճանկերից<sup>16</sup>: Սա գաղափար է, որին ժամանակին անչափ մեծ նշանակություն է տվել Օ. Շպենգլերը՝ այն դիտելով քրիստոնեական քաղաքակրթության զարգացման ամենակարևոր ազդակներից մեկը<sup>17</sup>: Իսկ այն եղել է նախնառաջ ավեստական: Դրան հսկայական նշանակություն է տվել ինչպէս Ջորտաստրը Ավեստայում, որի վկայությունն է վերոնշվածը, այնպէս էլ Գր. Լուսավորիչը, ու դա շատ դարեր առաջ, քան Եվրոպայում: Եվ հարթմնիության գաղափարը, որն այնպէս կարևորվում է քրիստոնեության մեջ՝ հատկապէս բողոքականության հոսանքում, ոչ միայն Նորկտակարանային ծագում ունի, և հիմնված է Պողոս առաքյալի թղթերի վրա, այլև ավեստական է և հին հայկական: Ինքը՝ Պողոս առաքյալը, Հայաստանից էր, Կիլիկիայի Տարսոն քաղաքից, և նրա արտահայտած շատ մտքեր ձևով գրադաշտական են:

Ը ճառի 81-րդ տանը տեղ է գտել մեկ ուրիշ և նորից առանձնահատկություն ունեցող «Երեք չափ»: Այն ձևակերպված է հետևյալ կերպ. «Ձի ուսումն վարդապետութեան խրատէ զուղղութիւն, որոշէ զլաւն ի վատթարէն, եւ պահել զարքութիւնն ըստ արինացն արդարութեան եւ ըստ աւետարանական լուսավորութեանն խորհրդով եւ բանիւ եւ գործով»: Ինչպէս տեսնում ենք, այստեղ արդեն «խորհուրդը» լիովին վերածվել է «մխոք», իսկ «բանը»՝ խոսք (գործողություն խոսքով) արտահայտող տերմինի: Թ

<sup>15</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 23, 25, 26, 27:

<sup>16</sup> Տե՛ս Աвестա в русских переводах (1861–1996), с. 119.

<sup>17</sup> Տե՛ս Օ. Шп е н г л е р. Закат Европы. Минск – М., 2000, с. 622, 678, 690, 699, 811–816, 837–839.

ճառի 44-րդ տանը խոսվում է «այլանդակ խորհրդի»՝ որպես «մտքի» մասին և պահանջ է արտահայտվում անմաքուր «միտքը» և վարքը (գործերը)՝ պահքի միջոցով մաքուրի վերափոխելու մասին, որպեսզի դրանց կրողը «Բնակարան Սրբութեան» մտնելու հնարավորություն ստանա: ԺԱ ճառի 27-րդ տանը օգտագործվում է «դժնդակ խորհուրդ մտաց», ԺԱ ճառի 76-րդ - տանն էլ՝ «աղտեղի խորհուրդ» բառակապակցությունները, նման «խորհրդի» տեսակներ են համարվում նաև անհավատությունը, երկմտությունը, հպարտությունը և այլն<sup>18</sup>: Դրանք ձևավորվում են չարի ազդեցության ներքո գտնվող արարածների մտքում, դրսևորվում նրանց խոսքի ու գործի ձևով: Բարի խորհրդածությունների, «լուսավորության խորհրդի» արդյունք են դիտվում համընդհանուր սերը, գթությունը, հնազանդությունը, հեզոթյունը և այլ դրական բնույթի բազմաթիվ նորմեր, որոնց առկայությունը մտքում, խոսքերում և գործերում ամեն կերպ խրախուսվում է:

Ժ ճառի 74-րդ և 121–122-րդ տներում առկա «Երեք չափերն» ունեն Ը ճառի 81-րդ տան «Երեք չափի» տեսքը և ձևը: Ժ ճառի 74-րդ տանն ասված է. «... եւ պարզեւք ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան բաժանին եւ որոշին յամենեցունց Տեառնէն, որ ի միտ առնու զամենեցուն զխորհուրդս, զբանս եւ զգործս»: Նույն ճառի 121–122-րդ տներում էլ ասված է. «Իսկ որ մեղաւորք են և լլկին, անդ բազմապատիկ ընդունին զհատուցումն բարեաց յարդար դատավորէն: Իսկ որ մեղաւորք են և լլկին, զպարտիս մեղաց իւրանց հատուցանեն. որ արհամարեցին զբանն Աստուծոյ եւ ոչ ապաշխարեցին. զի ամենայնի լինիցի հատուցումն խորհրդոց եւ բանից եւ գործոց երկրաւորացս»: Վերջին «Երեք չափը» նորից կրկնվում է ԺԸ ճառի 61-րդ, ԺԹ ճառի 42-րդ, ԻԱ ճառի 18-րդ, ԻԳ ճառի 1-ին և 19 տներում:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ «Երեք չափերում», որոնք հաճախ կրկնվողներից են, «խոսք» չափի փոխարեն գործածվել է «բան» տերմինով արտահայտված չափը: Դա էլ իր հերթին հանգեցրել է տվյալ «չափի» իմաստի ու բովանդակության պարզաբանման անհրաժեշտության: Ըստ Ս. Հարությունյանի՝ «բան» բառը «... ծագում է բալ բայից՝ «խոսել, ասել», որը հանգում է հնդեվրոպական *bha* – «խոսել» արմատին (Աճառյան, 1971, 383 հտն.): Բանը իր երեք հիմնական նշանակություններով՝ միտք (բանակալություն), խոսք (լեզու, բառ), գործ, նյութ (իր, առարկա) հանգում է հնդեվրոպական միտք-խոսք-գործ բանաձևին: Բանն, ուրեմն, նախնական իմաստով իր մեջ է համատեղել և խոսքը, մանավանդ բանաստեղծական խոսքը, իբրև սրբազան աստվածային բան (իմա՝ աղոթքը), և մարդկային միտքը, «որն ինքնին պատկանում է աստվածների աշխարհին (աստվածային խոսք – մարդկային միտք)», և գործը՝ արարումն ու առարկան, իբրև իրագործումն բարի նախորդ երկու առումների՝ մտքի և խոսքի»<sup>19</sup>:

<sup>18</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 49, 53, 68:

<sup>19</sup> Տե՛ս Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, աշխատասիրությամբ՝ Սարգիս Հարությունյանի, Երևան, 2006, էջ 27:

«Բան» տերմինի և «ընդհանրապես «Երեք չափի» իմաստի նման պարզաբանման ճշտությունը հիմնավորվում է «Հաճախապատում ճառքի» տվյալներով: Այնտեղ «բանը» հանդես է գալիս որպես խիստ բազմահարուստ մի գաղափար, որը, ինչպես տեսանք, արիական, հին հայկական է, որից էլ անցել է նաև քրիստոնեական քաղաքակրթությանն ու մշակույթին: Այդ ճառերում այն բազում անգամներ հիշատակվում է ինչպես «Երեք չափերում», այնպես էլ առանձին՝ արտահայտելով տարբեր իմաստներ: Երբեմն այն միտք է (գաղափար) (Ե:107, Թ:104, ԺԱ:57, 79, ԺԱ:163, ԺԴ: 23, ԺԸ:46, ԺԹ:40, Ի:18, 21, ԻԳ:36), երբեմն՝ խոսք (Ա:23, Դ:91, Դ:102, Ե:47, Զ:82, Է:12, 45, Ը: 81, Թ:15, ԺԱ:21, 23, 120, ԺԱ:163, 168, ԺԷ:28, ԺԸ:36, ԺԹ:16, ԺԹ:63, Ի:125, 164, ԻԳ:1), երբեմն էլ գործ (Ժ:62–63, ԺԱ:89), որը հազվադեպ է հանդիպում: Իսկ ավելի հաճախ այն արտահայտում է «միտք-խոսք-գործ» եռամիասնությունը (Ա:11, Բ:7, Բ:32, Բ:36, 41, 63, 107, 125, 133, Ե:12, 18, 21, 32, 114, Զ:2, 47, Է:96, Ը:46, 91, 96, 122, ԺԱ:3, 154, ԺԲ:41, 47, 50, ԺԲ:95, ԺԳ:2, 35, ԺԳ:54, 74, 76, ԺԴ:7, ԺԵ:1, ԺԸ:29, ԺԹ:2, 8, Ի:39, Ի:102, 145, ԻԲ:32, 74, 85):

Ամենակարևորը՝ Ս. Հարությունյանի բացահայտած օրինաչափության հիման վրա հնարավոր է դառնում մեկնաբանել «Հաճախապատում ճառքում» պարբերաբար հանդիպող «միաբանություն» (Զ:2, ԺԱ:14, ԺԱ:124, 126, 127–132, ԺԸ:49, Ի:96, ԻԳ:32, 42 և այլն) գաղափարի իմաստը և բովանդակությունը, որն է՝ «մտքով, խոսքով և գործով միասին լինելը»:

«Բան» բառը (ինչպես նաև միաբանությունը), լինելով զուտ արիական և հայկական կրոնական, իրավական և այլ նորմատիվ համակարգերին բնորոշ տերմին՝ շնորհիվ «Հաճախապատում ճառքի», անցել է քրիստոնեական մշակույթի մեջ, մտել նաև Աստվածաշնչի հայերեն բառակազմ՝ դրա հայերեն թարգմանության ժամանակ: Եվ եթե դա գրադաշտական քաղաքակրթության մեջ արտահայտում է «Միտք-խոսք-գործ» տրիադը կամ դրանք առանձին-առանձին վերցրած, ապա Աստվածաշնչում այն օգտագործվում է բազմաթիվ այլ իմաստներով, հիմնականում որպես զանազան իրեր, առարկաներ, երևույթներ, դեպքեր, իրադարձություններ արտահայտող ընդհանուր նշանակության բառ: Երբեմն այն արտահայտում է նաև այնպիսի գոյականներ, ինչպիսիք են միտքը, խոսքը կամ գործը, բայց առանց դրանց առանձնահատուկ նշանակություն տալու: Դրանք սուկ զուգադիպություններ են:

Ասվածը մասնավորապես հիմնավորվում է նաև այն փաստով, որ «Բան» բառը ռուսերեն հոմանիշ չունի, ռուսերեն չի թարգմանվում և բացակայում է այդ լեզվով հրատարակված Աստվածաշնչերում: Այդ բառի փոխարեն դրանցում օգտագործվում են զանազան իրեր, առարկաներ, երևույթներ, իրադարձություններ արտահայտող բառեր, երբեմն էլ՝ ցուցական դերանուններ (Օնունդ 18:14, 30, 20:8, 10, 21:26, Թուեր 5:13, Դատավորներ 2: 1, 1 Թագ. 15:6, 20:2, 26, 39, 24:7, 25:6, 15, 21, 26, 26:16, 29:3, 2 Թագ. 3:14, 20, 37, 8:10, 11:11 և այլն, Նոր Կտակարան, Մատթեոսի 11 :25, 12:1, 12:25, 30, 13:47, 14:16, 15:32, 17:19, 18:19, 25, 19:11, 20:27,

21:3, 23:46, 24:17, Մարկոսի 1:44, 2:12, Ղուկաս 1:3, 18, 25, 56, 5:26, 6:7)<sup>20</sup>:

Ռուսական Աստվածաշնչի Հովհաննեսի Ավետարանի Ա գլխի 1-ին տանր ասված է. «Սկզբից էր Խոսքը, և Խոսքը Աստծու մոտ էր, և Խոսքը Աստված էր...» («В начале было Слово, и Слово было у Бога, и Слово было Бог. Оно было в начале у Бога»): Նույն գլխի 14-րդ տանն էլ ասված է. «Եվ Խոսքը մարմին առավ...» («И Слово стало плотью...»)<sup>21</sup>: «Խոսք» բառի տակ ենթադրվել է Քրիստոսը: Գերմաներեն Աստվածաշնչի Նոր Կտակարանի նշված տեղերում էլ, ինչպես ռուսականում, այն «խոսք» է<sup>22</sup>: Իսկ ահա հայերեն Աստվածաշնչի նույն տեղում «խոսքի» փոխարեն օգտագործված է հայկական-արիական «բան» բառը, որն ավելի տարողունակ և լայն բովանդակությամբ հասկացություն է:

Այն փաստը, որ Աստվածաշնչում նախապես չի եղել «բան» բառը կամ այն փոխարինող բառ, և այն միայն հայկական Աստվածաշնչում է առկա, հիմնավորվում է նաև նրանով, որ II դարի վերջի և III դարի սկզբի քրիստոնեության նշանավոր գաղափարախոս Կ. Ալեքսանդրացին իր «Պեղագոգ» աշխատության մեջ, հենվելով Հովհաննեսի Ավետարանի նշված և այլ հատվածների վրա, Քրիստոսին անընդհատ կոչում է «Լոգոս», այն է՝ «Խոսք»<sup>23</sup>: Իսկ դա նշանակում է, որ նրան ժամանակակից հունարենով, երբայերենով կամ էլ ասորերենով գրված աստվածաշնչյան տեքստերում էլ Հովհաննեսի Ավետարանի առաջին գլխում օգտագործված է եղել «Խոսք» բառը:

Բացի այդ՝ պետք է նշել, որ այնուհետև Հովհաննես Ավետարանիչի հայերեն Ավետարանում «Բան» բառը շարունակում է օգտագործվել որպես գոյականներ արտահայտող սովորական բառ, այդ թվում՝ Քրիստոսի ասած խոսքն արտահայտող (14:24, 15:20, 16:1), ինչպես որ է Աստվածաշնչում ընդհանրապես: Ռուսերեն Աստվածաշնչում դրա հոմանիշները Հովհաննեսի Ավետարանում և դրան հաջորդած տեքստերում նորից բացակայում են (5:1, 6:12, 64, 7:18, 8:26, 30, 40, 9:33, 11:11, 51, 13:2, 17, 21, 14:24, 19:25 և այլն)<sup>24</sup>:

ԺԱ ճառի 147 տանն էլ ուշագրավ ձևով առաջադրված է մի նոր տրիադ: Այնտեղ ասված է. «Այլ իմանալեալքն որոշել զբարին ի միամիտ խորհուրդս, եւ հաւանական կամաւք գործել զբարիս անոյշ եւ քաղցր եւ լուսաւոր յորդորմամբ ամենագիւտ շնորհաւքն Քրիստոսի»<sup>25</sup>: Ինչպես տեսնում ենք, «խորհուրդն» այստեղ կրկին հանդես է գալիս որպես «միամիտ», այսինքն՝ աղտազերծ «միտք», իսկ «հավանական կամքը» արդեն ոչ թե մտքի, այլ խոսքի մեջ արտահայտված և Աստծո կամքի հետ ներդաշ-

<sup>20</sup> Տե՛ս Աստվածաշունչ, Մատեան Հին եւ Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, Библия. М., 1998, с. 18–21, 132, 231, 276–277, 280, 282, 287, 291, 1025, 1029, 1030, 1032, 1034–1035, 1039, 1043–1044.

<sup>21</sup> Տե՛ս Библия, с. 1127.

<sup>22</sup> Տե՛ս Die Bibel. Altes und Neues Testament. Stuttgart, 1980, S. 118.

<sup>23</sup> Տե՛ս Климент Александрийский. Педагог, кн., 1, гл. 6, М., 1996; гл. 7, с. 15, с. 21 և այլն:

<sup>24</sup> Տե՛ս Библия, с. 1133, 1135–1137, 1140, 1145, 1148, 1150, 1157.

<sup>25</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 68, 54, 64–65, 75:

նակ, Նրա սահմանած իրավունքի շրջանակներում դրսևորվող և Նրա հավանությանը ենթակա կամք: Եվ նորից մեր առջև է բարության ոլորտի մի նոր տրիադի տեսակ, որում մի նոր համադրման ենք ականատես: Բայց դա բոլորը չէ: Այնտեղ առկա է նաև մեկ այլ իրողություն արտահայտող տրիադ (*«անոյշ եւ քաղցր եւ լուսաւոր»*), որը սկզբունքորեն ավեստական է, բայց իմաստով նոր՝ քրիստոնեական: Այսպիսով, նշված «Չափերում» նորից և նորից դրսևորվում է «խորհուրդ» գաղափարի դիալեկտիկական բնույթը, դրա անցումը խոսքի, գործի և հակառակը:

Ժ ճառի 55-րդ տանը մատուցված է մի նոր, հրաշալի անակնկալ: Բացասական բնույթի «Երեք չափն» այնտեղ ձևակերպված է հետևյալ կերպ. «Ապա եթե ժանգով մեղացն ադտեղեալ իցէ, չար ցանկութեամբքն եւ չար խորհրդովքն եւ չար գործովքն եւ ոչ սրբէ զխորհուրդս եւ զգայարանսն եւ նայի ի վեր ի ճառագայթս Աստուածութեանն որ ի Քրիստոսն է արդարութեան արեգակն...»<sup>26</sup>: Ինչպես տեսնում ենք, «խորհուրդն» այստեղ նորից վերածվել է «խոսքն» արտահայտող տերմինի: Իսկ որպես «մտքին» փոխարինող հասկացություն տվյալ դեպքում օգտագործվել է «ցանկությունը»: Ազատ կամքի մասին ուսմունքներում «ցանկություն» տերմինն արտահայտում է մտքում ձևավորող ազատ կամքի գործողության պատճառների ուրուշակի խումբ և ազատ կամքը բնորոշող հասկացություններից մեկն է<sup>27</sup>: Իսկ այստեղ բացի այդ նշանակությունից, այն նաև ամբողջ «միտքը», դրա ուղղվածությունն արտահայտող հասկացություն է՝ նույնացված կամքի հետ:

ԺԲ ճառի 12-րդ տունը պարունակում է մի նոր, մինչ այդ չհանդիպող յուրահաստուկ կառուցվածք, իմաստ, նշանակություն և արժեքային լիցք ունեցող «Երեք չափ» ևս: Այնտեղ ասված է. «Երախտաւոր լինել հեռաւորաց եւ մերձաւորաց, առ դրացիս եւ ընտանիս. բարի կամաւք եւ բարի գնացիւք եւ բարի գործուք առ ամենեսէան լինել արժանաւոր իրաւամբք, եւ արդար եւ ուղիղ եւ սուրբ եւ ճշմարիտ վարս ստանալ»<sup>28</sup>: Այս տրիադում «Բարի միտք» բաղկացուցիչը արտահայտված է նորից «բարի կամք» բառակապակցություն-հասկացությամբ, իսկ «խոսք» բաղկացուցիչի փոխարեն օգտագործված է «բարի գնացք» բառակապակցությունը, որն էլ «խոսքը» և «գործը», այն է՝ իրավական, կրոնական, բարոյական, քաղաքական վարքագիծը, արարքը, դրանց շարքը արտահայտող, բնութագրող հասկացություն է: Դա ևս պատահական չէ: Ինչպես «միտքը» և «խոսքն» էին Գր. Լուսավորչի տրիադներում իրար փոխարինում և միմյանց փոխարեն օգտագործվում, այնպես էլ այդ նոր տերմինի միջոցով՝ «խոսքն» ու «գործը»: Օգտագործելով այդ բավական անսպասելի չափ արտահայտող տերմինը՝ մեծ փիլիսոփան նորից շեշտել է «չափերի»՝ միմյանց անցումների դիալեկտիկական, դրանց նույնությունը:

Առանձնահատուկ է նաև ԺԷ ճառի 36-րդ տան պարունակած «Երեք չափը»: Այն ձևակերպված է հետևյալ կերպ. «Տանուտէր անուանեաց (Աստված – Ս. Խ.) զառաջնորդս եկեղեցւոյ՝ զաշակերտեալս ճշմարտու-

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 51:

<sup>27</sup> Տե՛ս В. В и н д е л ь б а н д. О свободе воли. Минск–М., 2000, с. 3–16.

<sup>28</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 81–82:

թեան ասանդիցն, եւ գանձք զիմաստս սրտին, որ ի հնոյ եւ ի նորոյ ունի գատոյգ գիտութիւնն, եւ վայելեցուցանէ զմերձաւորս եւ զհեռաւորս բարի խորհրդովք եւ բարի գործովք եւ անարատ սրբութեամբ: Եւ զչար գործոցն զմթերս արտաքս պեղել, մինչ ոչ մնայցեն նշխարք չար գանձուցն ի բարի ուսմանցն, ընտրելով զլաւն ի վատթարացն»: Այստեղ խոսքն արդէն Աստուծու կողմից Հին և Նոր կտակարանների միջոցով եկեղեցու առաջնորդներին ճշմարտության ավանդներ, սրտի (այն է՝ հոգու, մտքի) իմաստություններ և ստույգ գիտություն տալու, նրանց տանուտեր դարձնելու մասին է: Դրանց հիման վրա նրանք բարի խորհուրդներով, բարի գործերով ու անարատ սրբությամբ պետք է «վայելք պատճառեն մերձավորներին ու հեռավորներին», այդ իմաստություններն առաջարկեն ամեն մեկին և յուրաքանչյուրին, ամեն կերպ օգնեն մարդկանց կատարել ճիշտ ընտրություն, իրենց քարոզներով չարը դուրս մղեն իրենց հոգուց, խոսքից ու գործից: Ձևի տեսակետից այս «Երեք չափն» առանձնահատուկ է նաև նրանով, որ դրա «միտք» բաղկացուցիչը տարվել է այդ «Տրիադի» վերջ և արտահայտվել բոլորովին նոր արտահայտչամիջոցով՝ «անարատ սրբությամբ», որը մտքի հատկանիշ է և պետք է դրսևորվի գործի մեջ, այդ թվում՝ խոսքով դրսևորվող գործի:

ԺԸ ճառի 36-րդ տանն առկա է ձևով պարզ ևս մի բացասական «Երեք չափ», որն ունի հետևյալ տեսքը. «Եաթներորդ. որ գտրտմութիւն բարկութեամբ շարժէ եւ խռովեալ պղտորէ զմերձաւորս, որ ի փորձանս խորհրդոց, եւ բանից եւ գործոց...»: Պետք է ասել, որ այս ճառի 30–39-րդ տներում, 1-ից մինչև 10-ը թվարկման մեջ ներկայացված են մի շարք «չարության բույսեր»՝ խաբէություն, ստություն, երդմնահարություն, անզգամություն, նախանձ, ատելություն և այլն: Նշված թվարկման 7-րդ կետում էլ գտնվում է այս «Տրիադը»: Այդ տներում դատապարտվում են անձինք, որոնք, բացասական բնույթի այդ «Տրիադին» հետևելով, իրենց մտքում ձևավորում կամ հավանություն են տալիս կամ դեկավարվում են չարության բույսեր հանդիսացող վերոնշված բացասական բնույթի նորմերով, դրանց հիման վրա ասում չար խոսքեր, կատարում չար գործեր: Նման անձանց ու նրանց գոհերին առաջարկվում է հեզությամբ հրաժարվել իրենց մտքում ձևավորված «չարի բույսերից»՝ «հավիտենական պատիժներից» խուսափելու համար:

Նույն ճառի 60–61-րդ տանը առկա է ձևով նույնպես սովորական «Երեք չափ», որը պետք է առանձնապես կարևորել ոչ միայն նրա համար, որ այն առաջարկվում է ԺԸ ճառի 36-րդ տան բացասական բնույթի «Երեք չափի» փոխարեն: Այն նաև ունի և՛ տեսական, և՛ գործնական-կիրառական նշանակություն, կրում է նորարարական բնույթ, նորություն է ինչպես ձևի, այնպես էլ անմիջական բովանդակության տեսակետից: Այնտեղ ասված է. «... Այսպիսի խրատու լինել աշակերտ եւ խորհրդակից, եւ մերկանալ զգբասանս աշխարհիս եւ զհոգս սնտոխս, եւ զգենուլ զհոգեւոր ազատութեանն լուսաւոր զգեստն՝ որ յառաքինութենէ կազմի անհամեմատ լուսովն: Եւ հանապազաւր քննող լինել խորհրդոց եւ բանից եւ գործոց. եթէ ստունգանեալ իցէ, ուղղեսցի լաւագոյն խրատու աստուածային գրոց ի ձեռն զղջման»: Այդ տներում նախևառաջ առկա է «Տրիադները» քրիստո-

նեակն էկեղեցու և դատարանների գործունեության զինանոց վերցնելու և դատավարության մեջ օգտագործելու պահանջ: Բացի այդ՝ այնտեղ յուրաքանչյուրին առաջարկվում է ամեն տեսակի գործունեություն ծավալելիս դեկավարվել միայն «Տրիադներով», իրենց և ուրիշների վարքագիծը դիտարկել այդ արժեքագնահատականային սկզբունքների հիման վրա և բացառապես՝ Սուրբ Գրքի պարունակած նորմերի լույսի ներքո: Միայն այդ «Տրիադի» կիրառման միջոցով և քրիստոնեական իրավունքի նորմերի պահպանմամբ մտածելով, խոսելով ու գործելով՝ մարդ կարող է ապահովել հավիտյան լուսեղեն ազատությունը և հասնել «Խաղաղության նավահանգիստ»:

ԺԹ ճառի 16-րդ, 42-րդ և 63-րդ տներում ձևակերպված «Երեք չափերը» նորից ստեղծագործաբար ձևավորած, կատարելագործած, տեսական և գործնական նշանակություն ունեցող «Տրիադներ» են, ունեն առանձնահատկություններ և նորից տարբերվում են նախորդներից: Չմոռանանք, որ ԺԹ ճառն ընդհանրապես նվիրված է ապաշխարությանը, որը, ըստ Գր. Լուսավորչի, ոչ միայն կրոնական, բարոյական, կարգապահական, այլև քրեական իրավունքի ոլորտի պատժատեսակ է, ընդ որում, ըստ նրա ծրագրի՝ պատիժների սիստեմում առաջնային և գլխավոր տեղ զբաղեցնող: ԺԹ ճառի 16-րդ տանը գտնվող «Տրիադը» արտաքինից կարելի է նաև դիտել որպես «Չորս չափ»: Այնտեղ ասված է. «Զի ի յանցավորաց անտի խորշեցեց մտաւք, բանիվ եւ ամաւթով եւ տեսութեամբ պատկառ. լաւ համարել զնեղութիւն կրել ընդ արդարս, քան զհանգիստն ընդ անիրաւս»: Ինչպես տեսնում ենք, այս «Տրիադն» էլ նման չէ ավեստականներին, թեև իր ձևով և նշանակությամբ ներկայացնում է ավեստականի զարգացման նոր մակարդակ: «Միտք» բաղկացուցիչն այստեղ պահպանված է, և դրա փոխարեն այլ տերմին՝ «կամք», «խորհուրդ» և այլն, օգտագործված չէ, ինչպես սովորաբար արվում է «Ճառքում»: Դրա փոխարեն այս «Երեք չափի» երկրորդ բաղկացուցիչի՝ «խոսքի», փոխարեն օգտագործված է «բան» տերմինը, որն այստեղ, հասկանալի է, նույն «խոսքն» է: Իսկ «տեսություն» տերմինն էլ, որն օգտագործված է «գործ» բաղկացուցիչի փոխարեն, նորից նույնություն է դրա, ինչպես նաև մտքի և խոսքի հետ: Այն նշանակում է երևացող, արտաքինից մարմնաշարժումներով, միմիկայով կամ դիմախաղով ցուցադրվող արարք կամ գործ, միտք և խոսք՝ միաժամանակ, որոնց միջոցով ցուցադրվում է հանցագործների ու հանցագործությունների նկատմամբ բոլորի համար տեսանելի խորշանք և առաջացնում ամոթի զգացմունք: Այդ «տեսությունը» պետք է լինի այնպիսին, որ հարուցի պատկառանք հանցագործների ու հանցագործությունների կամ չար գործերի նկատմամբ, խորշանք ցուցադրողի նկատմամբ և պարսավանք ու ամոթանք հանցագործների և նրանց կատարած հանցագործությունների նկատմամբ:

Նույն ԺԹ ճառի 41–42-րդ տներում էլ Գր. Լուսավորիչը կոչ է անում մարդկանց, որ նրանք, դեկավարվելով դրական բնույթի «Տրիադներով», ընտրություն կատարեն, հրաժարվեն չարի նորմերից, ապաշխարեն և անցնեն իսկական Աստծու առաջադրած հոգևոր նորմերի գործողության տակ. «Այս է ստոյգ աւանդիցն դէմք ապաշխարութեան. ամենայն որ ինչ հակա-

ռակ է մեղացն առնել զարդարությունն ամենայն որ երեւին եւ որ ոչն երեւին ի խորհուրդս մտերինս եւ ի յիշատակս աւետեացն ստոյգ ապաշխարողացն, եւ դարձեալ ի սպառնալեաց անապաշխարողացն յամենեցունց Տեառնէն: Յայստսիկ զգուշանալ եւ ի պատրաստի ունել զհաճոյսն Աստուծոյ ահիւն տեառն, հիշատակաւք անվրէպ գիտութեանն Աստուծոյ համարս առնելոյ արդար դատաւորին յաւուրն դատաստանի, յորում ոչ ինչ ծածկի ի խորհրդոց եւ ի բանից եւ ի գործոց: Ինչպէս տեսնում ենք, այստեղ էլ կրկին առաջարկ է արվում «Երեք չափերն» օգտագործել միայն «անվրէպ գիտութեան» կամ քրիստոնեական աստվածային նորմերի և ոչ թե հեթանոսական կամ էլ սեփական հայեցողության հիման վրա:

Հետաքրքիր կառուցվածք ունի նույն ճառի 63-րդ տան մեջ առաջադրված «Երեք չափը», որը նույնպէս դրա նոր փոխակերպում է, առանձնահատուկ զանազանակերպություն՝ իր որոշակի առանձնահատկություններով: Ահա այն. «Զի զհանապազորդ սխալանսն հանապազորդ արտասուաւք աւազանին լուանալ եւ սրբել. եւ զի հանապազաւր մեղանչեմք՝ որ խորհրդով, որ բանիւ, որ լսելով, որ տեսնելով, որ շարժմամբ իւրիք այսոքիկ, հանապազորդ աղաւթք եւ լուացք արտասուաց մի պակասեցէ»: Այստեղ «տեսնել» և «շարժում» տերմինները փոխարինում են «գործ» կամ արարք արտահայտող տերմինին և «Երեք չափի» համապատասխան բաղկացուցչին, իսկ լսելու ներքո նկատի է առնվում ուրիշների մտքերի խոսքերի ու գործերի մասին տեղեկանալու և դրանց նկատմամբ «երեք չափերի» միջոցով վերաբերմունք ձևավորելու և ցուցաբերելու անհրաժեշտությունը: Այսպիսով, այս տանը «Երեք չափերը» վերածվում են և՛ սեփական, և՛ ուրիշների մտքերի, խոսքերի ու գործերի, ընդհանրապէս ամեն մի տեղեկատվության և վարքագծի արժևորման, գնահատման ու դրանց նկատմամբ դիրքորոշում ձևավորելու համապարփակ միջոցի: Եվ իհարկէ, նորից ու նորից դրանց կիրառման հիմքը, գնահատման չափանիշը, ուղղորդողն աստվածաշնչյան հավատալիքները, գաղափարներն ու նորմերն են:

Վերջին՝ ԻԳ ճառում, որը պարունակում է վանականների և անապատականների կանոնադրությունը, Գր. Լուսավորիչը վանականներին, ճգնավորներին կարգադրում է ապրել և գործել «Երեք չափերի» սկզբունքների հիման վրա, ղեկավարվել դրանցով: Նա այդ ճառի 1-ին տանը պատվիրանում է. «Ամենայն որք հրաժարեցան յաշխարհէս եւ ընծայեցին Աստուծոյ զանձինս ի հնազանդութիւն ճշմարտութեան սուրբ հարցն աւանդից՝ կուսութեամբ ճգնաւորել յաղագս խոստացեալ աւետեացն, զգոյշ կացցեն խորհրդոց եւ բանից եւ գործոց. Զի մի խայթեցէ դարանակալ աւձն, եւ խափանեցէ ըստ աստուծոյ զգնացս սրբութեան եւ արդարութեան առաքինասէր վարուց»: Նույն ճառի 19-րդ տանն էլ ասված է, որ վանքի առաջնորդը «... զպտուղ ապաշխարութեանն առնէ ըստ սխալանաց խորհրդոց եւ բանից եւ գործոց»: Այսպիսով, վանահորից պահանջվում է վանականների սխալները քննել, այն է՝ վանքերի ներսում դատավարություն իրականացնել «Տրիադների» միջոցով և աստվածաշնչյան նորմերի հիման վրա: Նույն ճառի 67-րդ տանը, վանքի տնտեսին պատվիրանվում է ծուլություն չանել, չարհամարհել քաղցածներին,

զրկվածներին, նրանց նկատմամբ վարվել արդարաբար, ըստ օրենքի, քանզի Աստված «... ի միտ առնու զամենայն զխորհուրդս եւ զգործս»:

ԻԳ ճառի վերջում ևս տեղ են գտել կառուցվածքով և բովանդակությամբ յուրահաստուկ մի քանի «Տրիադներ», որոնք նորից ավեստական են, բայց կրկին ստեղծագործաբար վերակառուցված և վերաձևակերպված են: Դրա 85-րդ տանը վանականներին պարտադրվում է լինել «Ոչ որպէս մարդկան հաճոյ, այլ որպէս Աստուծոյ՝ որ քննէ զսիրտս եւ զերիկամունս. ի միտ առնուլ զիրաքանչիւրոցն զյաւժարութիւն. զբան եւ. զգործ»:<sup>29</sup> «Յաւժարութիւնը» կամքի ոլորտի հասկացություն է, նշանակում և արտահայտում է «ազատ կամք», և դրանով, իհարկե, այստեղ նորից արտահայտվել է «միտքը»: Նույն ճառի 88-րդ տանն էլ ասված է. «Եւ եղիցի վերակացուն հայր բարեմիտ, բարեխորհ եւ բարեգործ. արինակ լինել ամենայն բարեձեւութեան կարգաց եւ կրանից, աղաւթից եւ պահոց...»<sup>29</sup>: ԻԳ ճառի 109–111-րդ տների «Երեք չափերը» ընդհանրապէս աննախադեպ են իրենց բովանդակությամբ: 109-րդ տանն ասված է. «Այլ յիշատակաւք վերնոցն յուսով՝ հարք բարեւերք եւ բարեգութք եւ բարեխորհք լիցին նմանեալք Հաւրն երկնաւորի, որ նախախնամական սիրովն իւրոյ խնամէ զարարածս ամենայն հոգեւորապէս եւ մարմնաւորապէս երեւելի եւ աներեւոյթ դարմանաւք, հոգեխառն սիրով եւ բարեպաշտագոյն երեւմամբ ի Քրիստոս Յիսուս»: 110–111-րդ տներում էլ ասված է. «Եւ որդիք բարեհաւանք եւ սրբասէրք եւ ճշմարտասէրք, որոշեալք յամենայն դժնդակացն որ երեւին եւ որ ոչն երեւին: Եւ բուն հարեալ զհրեշտակական վարուց, սուրբ սրտիւ եւ անարատ մարմնով, ողջախոտ խորհրդով եւ անկեղծաւոր հաւատով, իրաւախոտք եւ հնազանդք առ Հայրն Հոգեաց եւ տեսուչ մարմնոցն»: Ինչպէս տեսնում ենք, այս «Տրիադները» լիովին քրիստոնէացված են: Բացի այդ՝ թվում է, թե դրանց բաղադրիչները «Երեք չափերի» հետ ձևականորեն ընդհանրություններ չունեն, բայց իրականում դրանցից ամեն մեկը և դրանց ամեն մի բաղկացուցիչ միաժամանակ, արդեն գեղարվեստականացված ձևով, արտահայտում են և՛ միտք, և՛ խոսք, և՛ գործ: Դրանք միաժամանակ «Տրիադների» հատուկ ձևեր են, որոնց կազմման հիմքերը նորից առկա են Ավեստայում, բայց այստեղ դրանք Գր. Լուսավորչի շնորհիվ զարգացման ավելի կատարյալ աստիճանի են բարձրացված:

Ավեստայում նման «Երեք չափերի» օրինակ կարելի է համարել «Ֆրավարդին-յաշտի» որոշ տներում տեղ գտած գեղարվեստորեն օգտագործված «Երեք չափերը»: Դրանցում ֆրավաշիները կոչվում են «բարի, ուժեղ, սուրբ»<sup>30</sup>: Դրանց կատարյալ օրինակները, բացի վերոնշյալներից, սփռված են «Հաճախապատում ճառքի» բոլոր ճառերում, և որոնք իրենց ձևով ու բովանդակությամբ գերազանցում են Ավեստայում եղածներին: Դրանցից են. «Սով, սուր, գերություն», «Առողջ, անբիծ, անարատ», «Անուշ և քաղցր և լուսավոր», «Հայր, Որդի և Սուրբ Հոգի», «Հույս, սեր, հավատ» և այլն:

Այս գուգահեռները վկայում են Ավեստայի ու «Հաճախապատում ճառքի» անժխտելի կապի մասին: Գր. Լուսավորիչը դրանով իսկ շրջանառության մեջ է թողել, օրինականացրել, աղապտացրել, հարմարեցրել և սրբաց-

<sup>29</sup> Տե՛ս Հաճախապատում ճառք, էջ 27, 37, 43, 49: 61, 62, 65, 82, 92, 111, 112, 129, 133, 134:

<sup>30</sup> Տե՛ս Авеста в русских переводах (1861–1996), с. 321–339.

*րել է ոչ միայն «Երեք չափերը», այլև հայտնաբերել դրանց նոր արտահայտչաձևեր, ստեղծել նորերը: Դրանց ներդրումը քրիստոնեական մշակույթի մեջ բացել են ստեղծագործական նոր ուղիներ, հեռանկարներ:*

ПРИНЦИПЫ «ТРЕХ МЕР»  
В «ЧАСТОПОВТОРЯЕМЫХ РЕЧАХ»

САМВЕЛ ХАЧАТРЯН

Р е з ю м е

Такие принципы и методы зороастрийских, а позже и христианских правовых, нравственных, религиозных, экономических, политических и эстетических идейно-регулятивных нормативных систем, как «Три меры» или «Триады» – «Добрая мысль, доброе слово, доброе дело» и «Злая мысль, злое слово, злое дело», встречаются как во всех структурных частях Авесты, так и в «Частоповторяемых речах» Григория Просветителя. Он не просто использовал «Триады» при оценке и квалификации мыслей, слов и дел людей, ангелов и дэвов, но с их помощью подвергал рецепции зороастрийские идеи, нормы, верования, ритуалы, отождествлял их с библейскими, создавая, по сути, новые – христианские правовые, религиозные, нравственные, эстетические, политические и экономические идейно-регулятивные нормативные системы, пригодные для действия в христианском государстве. Тем самым он содействовал построению христианской цивилизации, обеспечив диакронную связь и преемственность между двумя армянскими цивилизациями.

THE PRINCIPLES OF “THREE MEASURES”  
IN “FREQUENTLY REPEATED SPEECHES”

SAMVEL KHACHATRYAN

S u m m a r y

Such principles and methods of Zoroastrian, and later Christian legal, moral, religious, economic, political and aesthetic ideological-regulatory normative systems, as the “Three measures” – or “Triads” – “Good thought, good word, good deed” and “Evil thought, evil word, evil thing” occur both in all structural parts of Avesta and in the “Frequently Repeated Speeches” of Gregory the Illuminator. He did not just use the “Triads” in the evaluation and qualification of thoughts, words and deeds of people, angels and devas, but with their help he also subjected the Zoroastrian ideas, norms, beliefs, rituals to reception; identified them with the Bible, thus creating new – Christian legal, religious, moral, aesthetic, political and economic ideological-regulatory normative systems, suitable for operating in a Christian state. He thereby helped to build a Christian civilization, providing a diachronic connection and succession between the two Armenian civilizations.